Կարգապահական գործ թիվ ԿԳ-24178

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԶՈՅԱ ՎԱՍԻԼԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Զոյա Հակոբյանի,

քննության առնելով փաստաբան Զոյա Վասիլի Հակոբյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 191) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմեն Հովհաննիսյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ 2024 թվականի մարտ-ապրիլ ամիսներին դիմել է փաստաբան Զոյա Հակոբյանին՝ իր իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով: Ըստ Դիմողի՝ Փաստաբանը պետք է լուծեր իր սեփականության նկատմամբ սխալ հաշվարկված գույքահարկի և տուգանքների հարցը:

Դիմողի պնդմամբ՝ Փաստաբանը հայցադիմում է ներկայացրել դատարան, որը սկզբում վերադարձվել է, իսկ կրկին ներկայացված լինելով՝ դրա ընդունումը մերժվել է (ՎԴ/4126/05/24): Ըստ Դիմողի՝ հետագայում Փաստաբանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 02-ի որոշմամբ: Դիմողը պնդել է, որ ծառայությունների համար վճարել է 80 000 ՀՀ դրամ, և 20 000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք:

Դիմողը հավելել է, որ Փաստաբանը հրաժարվել է ծառայությունների հետագա մատուցումից և հրաժարվում է վերադարձնել գումարի մի մասը: Դիմողը նաև պնդել է, որ Փաստաբանը ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքել:

թիվ ԿԳ-24178-2-Ա
16.04.2025թ.

Պալատի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 01/03.3/1417-2024 գրությամբ Դիմողին առաջարկվել է ներկայացնել կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար նշանակություն ունեցող տեղեկություններ, այդ թվում՝ համապատասխան բացատրություն, նյութեր, ապացույցներ (առկայության դեպքում)՝ ներառյալ նաև այն մասին, թե առկա՞ է արդյոք որևէ փաստաթուղթ, որը վկայում է Դիմողի կողմից Փաստաբանին դիմած լինելու մասին: Նշված գրությանը Դիմողը չի արձագանքել, լրացուցիչ դիրքորոշում և/կամ նյութեր չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, ինչպես նաև տեղեկացվել է, որ Փաստաբանը ներկայացրել է Դիմողի հետ կնքված պայմանագրի պատճենը՝ ի հակադրումն Դիմողի այն պնդման, թե Փաստաբանի և իր միջև պայմանագիր չի կնքվել: Նշված գրությանը Դիմողը չի արձագանքել, լրացուցիչ դիրքորոշում և/կամ նյութեր չի ներկայացրել:

Հանձնաժողովի նիստ(եր)ին Դիմողը չի մասնակցել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Դիմողի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը նախքան կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը՝ 2024 թվականի նոյեմբերի 11-ի բացատրությամբ հայտնել է, որ 2024 թվականի ապրիլ ամսի սկզբին Դիմողը դիմել է իրեն՝ հայտնելով, որ Երեբունի վարչական շրջանի թաղապետարանից ծանուցագիր է ստացել իրեն պատկանող խանութի վարձակալությամբ տրամադրված հողամասի չվճարած գույքահարկի պարտավորությունների վերաբերյալ, որոնց չափը կազմել է 535 319 ՀՀ դրամ:

Ըստ Փաստաբանի՝ ինքը Դիմողին խորհուրդ է տվել դիմել թաղապետարան՝ հարցն արտադատական կարգով լուծելու համար: Փաստաբանի պնդմամբ՝ որոշ ժամանակ անց Դիմողը կրկին այցելել է իր գրասենյակ՝ իր հետ բերելով փաստաթղթերի փաթեթը և ասելով, որ պետք է դիմել դատարան: Փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո ինքը Դիմողին հայտնել է, որ հայցադիմում պետք է ներկայացնել ՀՀ վարչական դատարան, որի համար պետք է վճարել 20 000 ՀՀ դրամ պետական տուրք և 80 000 ՀՀ դրամ՝ փաստաբանական ծառայության համար, ինչին Դիմողը համաձայնվել է:

Փաստաբանը նշել է, որ Դիմողը 2024 թվականի ապրիլի 12-ին բանկում վճարել է 20 000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը և 80 000 ՀՀ դրամ՝ Փաստաբանի կողմից մատուցվելիք ծառայության վճարը: Նույն օրը Դիմողի հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որի մեկ օրինակը, Փաստաբանի պնդմամբ, տրամադրվել է Դիմողին:

Փաստաբանի բացատրության համաձայն՝ 2024 թվականի ապրիլի 16-ին ՀՀ վարչական դատարան է մուտքագրվել Դիմողի հայցն ընդդեմ Երեբունի թաղապետարանի՝ ակտն անվավեր ճանաչելու պահանջով, որը դատարանի 2024 թվականի ապրիլի 25-ի

որոշմամբ վերադարձվել է՝ թերությունների շտկման ու կրկին ներկայացման հնարավորությամբ:

Փաստաբանի պնդմամբ՝ դատարանի մատնանշված թերությունները վերացվել են, և հայցը 2024 թվականի մայիսի 07-ի որոշմամբ կրկին ներկայացվել է դատարան, սակայն դատարանի 2024 թվականի մայիսի 15-ի որոշմամբ կրկին վերադարձվել է:

Հաջորդիվ Փաստաբանը նշել է, որ 2024 թվականի մայիսի 21-ին կրկին հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան, որը 2024 թվականի մայիսի 29-ին մերժել է հայցադիմումի ընդունումը: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից ընդունվել է վարույթ, քննվել և մերժվել 2024 թվականի սեպտեմբերի 02-ի որոշմամբ:

Փաստաբանի պնդմամբ՝ հիշյալ որոշումը Դիմողը Փաստաբանի պահանջով տրամադրել է իրեն՝ ուսումնասիրելու համար, ինքն առաջարկել է Դիմողին՝ տվյալ որոշումը բողոքարկել վճռաբեկության կարգով, սակայն Դիմողը հրաժարվել է, 2024 թվականի նոյեմբերի 01-ին Փաստաբանի մոտից վերցրել է քննարկվող որոշումը՝ հայտարարելով, որ թաղապետարանի հետ արդեն համաձայնության են եկել, և չի ցանկանում այլևս շարունակել:

Նույն բացատրությամբ Փաստաբանը նաև նշել է, որ համաձայն Դիմողի հետ առկա պայմանագրի՝ ինքը Վարչական դատարան հայց ներկայացնելուց հետո չպետք է շարունակեր ծառայություններ մատուցել Դիմողին, բայց նկատի ունենալով, որ Դիմողի հանգուցյալ հոր հետ գտնվել են ընկերական և ընտանեկան հարաբերությունների մեջ, ինչին ականատես է եղել նաև Դիմողը՝ ինքը հաշվի է առել այդ հանգամանքները և շարունակել է փաստաբանական ծառայություն մատուցել Դիմողին՝ նաև Վարչական դատարան հայց ներկայացնելուց հետո: Փաստաբանը հավելել է, որ այդ ծավալի աշխատանքի համար Դիմողը վճարել է ընդամենը 80 000 ՀՀ դրամ, որի մեջ ներառվել են նաև հարկային պարտավորությունների և այլ ծախսերի գումարները:

Փաստաբանը բացատրություն է ներկայացրել նաև կարգապահական վարույթ հարուցվելուց հետո՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ին, որով անհիմն է համարել կարգապահական վարույթի հարուցումը և պնդել, որ իր կողմից որևէ նորմ չի խախտվել: Տվյալ բացատրությամբ ըստ էության վերահաստատելով իր նախորդ բացատրությամբ կատարված պնդումները՝ Փաստաբանը նաև հայտնել է, որ Դիմողն իրեն է դիմել 2024 թվականի մարտ ամսին, և ինքը Դիմողի տրամադրած փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո Դիմողին հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանում բողոքարկելու համար անհրաժեշտ է որոշում, որն առկա չէ Դիմողի ներկայացրած փաստաթղթերում:

Փաստաբանի պնդմամբ՝ ինքը մերժել է դիմում գրել, ինչից որոշ ժամանակ անց Դիմողը կրկին այցելել է իր գրասենյակ՝ պահանջելով հայցադիմում ներկայացնել ՀՀ վարչական դատարան, քանի որ դա անհրաժեշտ է Դիմողին՝ այլ գործարքի համար: Փաստաբանի պնդմամբ՝ ինքն առարկել է՝ հայտնելով, որ բողոքարկման համար անհրաժեշտ է որոշում, իսկ առկա պայմաններում հնարավոր է՝ արդյունքի չհասնեն: Դիմողը կրկին հեռացել է՝ որոշում ներկայացնելու համար, սակայն Էրեբունի թաղապետարանից Դիմողին հայտնել են, որ ներկայացված փաստաթղթերը բավարար են դատարան դիմելու համար:

Ըստ Փաստաբանի՝ 2024 թվականի ապրիլ ամսվա սկզբին Դիմողը կրկին այցելել է իրեն ու պահանջել է հայցադիմում գրել՝ Վարչական դատարան ներկայացնելու համար:

Փաստաբանի պնդմամբ՝ ինքն առարկել է, բայց քանի որ Դիմողը պնդել է՝ ինքը Դիմողին հայտնել է, որ վերջինիս պահանջով է հայց գրում, որի համար Դիմողը պետք է վճարի 20 000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար և 80 000 ՀՀ դրամ՝ փաստաբանական ծառայության գումար, ինչին Դիմողը համաձայնվել է:

Փաստաբանը հավելել է, որ շուրջ 43 տարվա գործող փաստաբան է, ծանրաբեռնված քրեական, քաղաքացիական և վարչական գործերով, տիրապետում է նաև վարչական դատավարությանը և օրենքին: Դիմողը մարտի սկզբից դիմել է իրեն՝ հայց գրելու և դատարան ներկայացնելու համար, ինքը չի գրել, պահանջել է վարչական ակտ՝ դատական կարգով վիճարկելու համար, իսկ առկա իրավիճակում հայցադիմում գրել է Դիմողի պահանջով: Փաստաբանի պնդմամբ՝ ինքն իր պարտավորությունները կատարել է բարեխղճորեն: Դիմողն է նշել, որ Վերաքննիչ վարչական դատարանի որոշումը բողոքարկել չի ցանկանում՝ թաղապետարանի հետ համաձայնության գալու հանգամանքից ելնելով:

Փաստաբանը նաև նշել է, որ 43 տարիների իր գործունեության ընթացքում ցուցաբերած մասնագիտական բարձր պատրաստվածության, անբասիր աշխատանքի, գործերով լավ արդյունք ապահովելու շնորհիվ ձեռք է բերել իր վստահորդների վստահությունը և հարգանքը: Իրեն դիմած որևէ քաղաքացու իրավունք չի խախտվել, քանի որ լիարժեք իրավական օգնություն են ստացել՝ ներառյալ նաև Դիմողը: Արդյունքում, Փաստաբանը պնդել է, որ ինքը լիարժեք կատարել է իր պարտականությունները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, ինչին ի պատասխան՝ Փաստաբանը խնդրել է հիմք ընդունել իր 2024 թվականի դեկտեմբերի 17-ի բացատրությունը, ինչպես նաև ներկայացրել է Դիմողի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրված ստացական՝ Փաստաբանից 40 000 ՀՀ դրամ ստանալու և այլևս ոչ մի պահանջ չունենալու մասին, նաև հետևյալ արտահայտությամբ՝ «իմ պահանջով փաստաբանը հայցը գրել է դատարան ներկայացնելու համար»:

Հանձնաժողովի նիստ(եր)ին Փաստաբանն ըստ էության պնդել է գրավոր փաստաթղթերով ներկայացված իր դիրքորոշումը՝ նշելով, որ սկզբնապես վերադարձված, իսկ վերջնարդյունքում ընդունումը մերժված հայցը կազմելուն մասնագիտական տեսանկյունից կողմ չի եղել, սակայն կազմել է այն՝ Դիմողի պահանջով, իսկ Վերաքննիչ վարչական դատարանի որոշումը Վճռաբեկ դատարան չի բողոքարկել՝ Դիմողի կողմից բողոքարկումից հրաժարվելու հիմքով:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 416-Ա/ԿԳ-24178 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.1, 2.7.2, 3.1.3, 3.5.5 և 3.8.1

(1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը 2024 թվականի դեկտեմբերի 05-ին հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 2025 թվականի փետրվարի 05-ին կազմել է եզրակացություն, որում շարադրվել են կարգապահական գործի կողմերի դիրքորոշումները, գործում առկա նյութերի ցանկը և էական այլ տվյալներ:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 2025 թվականի փետրվարի 05-ին:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 2025 թվականի մարտի 05-ին ժամը 19:30-ին և 2025 թվականի ապրիլի 16-ին ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանի և Դիմողի միջև 2024 թվականի ապրիլի 12-ին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր: *Տվյալ փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված պայմանագրի պատճենով, որի իսկությունն ու իրավաբանական այլ հատկանիշները Հանձնաժողովը լիազորված չէ կասկածի տակ առնել:*

2. Փաստաբանը Դիմողի համար կազմել է թիվ ՎԴ/4126/05/24 վարչական գործով վերադարձված հայցադիմումը, կրկին ներկայացված ու վերադարձված հայցադիմումը, կրկին ներկայացված և ընդունումը մերժված հայցադիմումը, ինչպես նաև վերաքննիչ բողոքը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ: *Տվյալ փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

3. Դիմողը Փաստաբանին վճարել է 80 000 ՀՀ դրամ, ինչպես նաև վճարել է 20 000 ՀՀ դրամ պետական տուրք՝ թիվ ՎԴ/4126/05/24 վարչական գործով հայցադիմումի համար: *Տվյալ փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, մասամբ նաև՝ գործում առկա ՀԴՄ կտրոնի և վճարման հանձնարարագրի անդորրագրի պատճեններով:*

4. Փաստաբանը Դիմողին 2024 թվականի դեկտեմբերի 11-ին վերադարձրել է վճարված 80 000 ՀՀ դրամ ծառայության վճարի մասը՝ 40 000 ՀՀ դրամ: *Տվյալ փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված ստացականի պատճենով, որի իսկությունն ու իրավաբանական այլ հատկանիշները Հանձնաժողովն լիազորված չէ կասկածի տակ առնել:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանողը փաստաբան է հանդիսանում 1982 թվականի հոկտեմբերի 18-ից և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.3 և 3.8.4 (1) ենթակետերի մասով ենթակա է կարճման՝ պայմանավորված այդ մասով Փաստաբանի վարքագծում խախտման ու ըստ այդմ՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայությամբ, իսկ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի մասով Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ պայմանավորված այդ մասով Փաստաբանի վարքագծում խախտման առկայությամբ:

<u>7.1. Կանոնագրքի 3.1.3 ենթակետի վերաբերյալ.</u>

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ:* ***Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:***

Օրենքի 39-9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, և որում առկա է փաստաբանի մեղքը:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Ըստ այդմ, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման հատկանիշների առկայության հարցին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ *Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Այսպիսով, Կանոնագրքի 3.1.3 ենթակետը որպես կարգապահական խախտում է դասակարգում փաստաբանական գրասենյակի (փաստաբանի) կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր չկնքելը, ինչը նկատի ունենալով՝ Հանձնաժողովը սույն մասով կարգապահական վարույթի լուծման շրջանակներում պետք է պարզի այն հարցը, թե արդյո՞ք Դիմողի և Փաստաբանի միջև կնքվել է իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր:

Նշվածի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողը սկզբնապես պնդել է Փաստաբանի հետ իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր կնքված չլինելու մասին, սակայն Փաստաբանը սահմանված ժամկետում որպես ապացույց ներկայացրել է

իր ու Դիմողի միջև կնքված պայմանագիրը, իսկ Դիմողը դրանից հետո չի հերքել այդ պայմանագիրն իր կողմից կնքված լինելու փաստը, ինչպես նաև չի հերքել այդ պայմանագրի հետ կապված որևէ այլ փաստ, թեև Պալատից ստացված համապատասխան գրությամբ տեղեկացվել է Փաստաբանի կողմից այդպիսի պայմանագիր ներկայացված լինելու մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Հանձնաժողովը լիազորված չէ սեփական նախաձեռնությամբ և կարգապահական գործի քննության շրջանակներում կասկածի տակ առնել կամ քննարկել տվյալ պայմանագրի իսկությունը և իրավաբանական այլ հատկանիշները, միևնույն ժամանակ նկատի ունենալով Փաստաբանի անմեղության կանխավարկածն ու չփարատված կասկածները Փաստաբանի օգտին մեկնաբանելու կանոնը՝ Հանձնաժողովը հաստատված չի համարում Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտում թույլ տրվելու փաստը և արձանագրում է, որ տվյալ ենթակետի մասով Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը բացակայում են, ուստի կարգապահական վարույթն այդ մասով ենթակա է կարճման:

<u>7.2. Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի վերաբերյալ.</u>

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ:* ***Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:***

Օրենքի 39-9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ*

կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, և որում առկա է փաստաբանի մեղքը:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Ըստ այդմ, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի խախտման հատկանիշների առկայության հարցին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Այսպիսով, Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետը որպես կարգապահական խախտում է դասակարգում իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը լուծելիս Փաստաբանի կողմից գումարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել՝ չվերադարձնելու վարքագիծը՝ բացառությամբ, եթե պայմանագրով նախատեսված է այլ կարգավորում:

Այլ կերպ՝ իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը լուծելիս Փաստաբանի կողմից գումարի վերադարձման իրավաչափության հարցերը Կանոնագրքի ու հետևաբար նաև՝ Հանձնաժողովի քննարկման տիրույթում են գտնվում բացառապես այն դեպքում, երբ կարգավորված չեն Փաստաբանի կողմից կնքված պայմանագրով: Տրամաբանորեն,

պայմանագրով այդ հարցերը կարգավորված լինելու դեպքում կողմերի միջև հնարավոր վեճն արդեն դուրս է դասվում վարքագծային-էթիկական հարթությունից ու դասակարգվում է որպես քաղաքացիաիրավական բնույթի մասնավոր վեճ, որն արդեն ենթակա չէ լուծման Հանձնաժողովի կողմից ու Կանոնագրքի դրույթներով:

Նշվածի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն կարգապահական գործի նյութերում առկա՝ Փաստաբանի և Դիմողի միջև ստորագրված պայմանագրի 4.4 կետով կողմերը պայմանագրային կարգավորման են ենթարկել գումարային վերադարձելիության հարցերը՝ սահմանելով, որ «Սույն պայմանագրով նախատեսված և փաստացի վճարված հոնորարը անկախ գործի ելքից չի վերադարձվում», ինչն արդեն իսկ բացառում է Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի խախտման առկայությունը և բավարար հիմք ծառայում՝ այս մասով կարգապահական վարույթի կարճման համար:

Բայց և այնպես, Հանձնաժողովն ընդգծում է նաև այն փաստը, որ կարգապահական վարույթի ընթացքում Փաստաբանը ներկայացրել է Դիմողի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրված ստացական՝ Փաստաբանից 40 000 ՀՀ դրամ ստանալու և այլևս ոչ մի պահանջ չունենալու մասին, իսկ Դիմողը դրանից հետո չի հերքել այդ ստացականն իր կողմից ստորագրված և դրանում նշված գումարը Փաստաբանից ստացած լինելու փաստը, ինչպես նաև չի հերքել այդ ստացականի հետ կապված որևէ այլ փաստ, թեև առնվազն կարգապահական գործով հրավիրված նիստերին մասնակցելու պարագայում կունենար դրա հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Հանձնաժողովը լիազորված չէ սեփական նախաձեռնությամբ և կարգապահական գործի քննության շրջանակներում կասկածի տակ առնել կամ քննարկել տվյալ ստացականի իսկությունը և իրավաբանական այլ հատկանիշները, միևնույն ժամանակ նկատի ունենալով Փաստաբանի անմեղության կանխավարկածն ու չփարատված կասկածները Փաստաբանի օգտին մեկնաբանելու կանոնը՝ Հանձնաժողովը նաև այս՝ առանձին և ինքնին բավարար հիմքով հաստատված չի համարում Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի խախտում թույլ տրվելու փաստը և արձանագրում է, որ տվյալ ենթակետի մասով Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը վերոնշյալ երկու առանձին հիմքերով բացակայում են, ուստի կարգապահական վարույթն այդ մասով ենթակա է կարճման՝ վերոնշյալ երկու առանձին հիմքերով:

<u>7.3. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի վերաբերյալ.</u>

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական փույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին*

կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.1 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի համադրված վերլուծության ու մեկնաբանության շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը յուրաքանչյուր գործ ստանձնելիս պետք է օժտված լինի տվյալ գործը պատշաճ վարելու համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների բավարար իմացությամբ ու բավարար գործնական փորձով, ինչը ոչ միայն մասնագիտական, այլև վարքագծային-էթիկական նշանակության կանոն է, առանց որի կատարման հնարավոր չէ կամ առնվազն վտանգված է տվյալ գործով բարեխիղճ իրավական օգնության տրամադրումը, ներառյալ նաև՝ հնարավոր իրավական հետևանքների գիտակցումն ու դրանց առաջացման մասին իրազեկումը վստահորդին, ինչպես նաև գործը պատշաճ վարելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Հանձնաժողովը հատուկ ընդգծում է, որ միայն գործի կամ հարցի՝ ոչ ի նպաստ վստահորդի լուծումն ինքնին, առանց լրացուցիչ փաստերի ու հանգամանքների, չի կարող

մեկնաբանվել որպես Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման բավարար հիմնավորում, ինչը բխում է նաև Օրենքի 39.1 հոդվածի 3-րդ մասից:

Այդուհանդերձ, որևէ գործի կամ հարցի՝ ոչ ի նպաստ վստահորդի լուծումն ինքնին բավարար հիմք է՝ Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման առկայությունը քննելու համար, եթե առկա է կարգապահական վարույթ, ընդ որում՝ վարույթի հարուցումից հետո նույնիսկ վստահորդի բողոքի հետկանչը չի արգելակում տվյալ հարցի քննությունը և չի բացառում Փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը՝ նկատի ունենալով, որ այդպիսի օրենսդրական հիմքեր առկա չեն, իսկ նմանատիպ հարցերը մասնավոր գանգատի կանոններով չեն քննարկվում կամ թողնվում առանց քննարկման:

Վերոնշյալ դատողությունների շրջագծում անդրադառնալով տվյալ կոնկրետ դեպքում Փաստաբանի վարքագծի իրավաչափությանն ու համապատասխանությանը Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջներին՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում վկայակոչված դրույթներով նախատեսված խախտումներն առկա են, քանի որ տվյալ կոնկրետ դեպքում Փաստաբանի կողմից Դիմողին տրամադրված իրավական օգնությունը կասկածի տակ է դնում Դիմողի հանձնարարության պատշաճ ու որակավորված կատարման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների իմացությունն ու գործնական փորձին տիրապետելու հանգամանքը Փաստաբանի կողմից, ավելին՝ Փաստաբանի կատարած և/կամ նրա խորհրդով Դիմողի կատարած գործողությունները տվյալ կոնկրետ իրավիճակում չեն հանդիսացել անհրաժեշտ, ճշգրիտ ու թիրախային, քանի որ՝

- Վարչական պատասխանատվություն չսահմանող և իբրև վարչական ակտ վիճարկված փաստաթղթի բողոքարկման նպատակով վիճարկման հայց ներկայացնելու համար վճարվել է 20 000 ՀՀ դրամ պետական տուրք, մինչդեռ պետք է վճարվեր 10 000 ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը: Ի դեպ, Հանձնաժողովն ընդգծում է, որ ավել վճարված պետական տուրքի գումարը, գուցե նաև՝ ողջ՝ 20 000 ՀՀ դրամ գումարը Դիմողն առերևույթ իրավունք ունի հետ ստանալ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «բ» կետի հիման վրա, այսինքն՝ այդ գումարից Դիմողը վերջնականապես չի զրկվել, իսկ պետական տուրքի ավել վճարման հանգամանքը Հանձնաժողովն ընդգծում է միայն որպես Փաստաբանին վերագրվող կարգապահական խախտման՝ որակավորվածության, անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների չիմացության և գործնական փորձի բացակայության հիմնավորում, ոչ թե որպես Դիմողին պատճառված վնաս.

- Խնդրո առարկա գույքի մասով Դիմողի՝ գույքահարկի (անշարժ գույքի հարկ) գծով հարկային պարտավորությունների բացակայությունը հաստատելու նպատակով ներկայացվել է վիճարկման հայց՝ որպես հայցի օբյեկտ ընտրելով ակնհայտորեն վարչական ակտ չհանդիսացող փաստաթուղթ, մինչդեռ վարչական ակտի բացակայության պայմաններում վիճարկման հայցի քննությունը, առավել ևս՝ բավարարումը բացառվում է, ինչն ընդունում է նաև Փաստաբանը՝ գրավոր և բանավոր բացատրություններով, և ինչն արձանագրվել է նաև Դիմողի գործով առաջին ու վերաքննիչ ատյանի Վարչական դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով: Փոխարենը, նմանատիպ իրավիճակներում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով

նախատեսված՝ իրավունքի պաշտպանության հայցային եղանակը հանդիսանում է 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ իրավահարաբերության բացակայության ճանաչման պահանջով հայցը, որի ներկայացման հնարավորությունից, ի դեպ, Դիմողն առերևույթ զրկված չէ նաև այժմ: Դիմողի նկարագրած իրավական խնդրի պարագայում ոչ ճիշտ հայցատեսակի ընտրությունը ու Վարչական դատարանի կողմից հայցադիմումը 2 անգամ վերադարձվելու և տվյալ հանգամանքը մատնանշվելու, սակայն չշտկվելու փաստը ևս համակցությամբ վկայում են Փաստաբանին վերագրվող կարգապահական խախտման՝ որակավորվածության, անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների չիմացության և գործնական փորձի բացակայության մասին.

- Փաստաբանը նաև չի բողոքարկել Դիմողի գործով Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 02-ի՝ ի վնաս Դիմողի կայացված որոշումը, որի համար չի ունեցել Դիմողի համաձայնությունը, իսկ գործում առկա՝ Դիմողի ստորագրությամբ փաստաթղթերը չեն պարունակում Դիմողի համաձայնությունը՝ տվյալ դատական ակտը չբողոքարկելու վերաբերյալ: Ինչ վերաբերվում է Փաստաբանի այն դիրքորոշմանը, թե հայց ներկայացնելով՝ իր հանձնարարությունը սպառվել է, և վճռաբեկ բողոքարկման համար Դիմողի հետ պայմանագիր կամ այլ համաձայնություն առկա չի եղել, ապա Հանձնաժողովը դա գնահատում է անհիմն՝ հաշվի առնելով, որ այդ փաստարկը վերագրելի է նաև վերաքննիչ բողոքարկմանը, սակայն Փաստաբանը ստանձնել ու իրականացրել է դա՝ այդպիսով Դիմողի մոտ ձևավորելով առնվազն ոչ անհիմն ակնկալիք առ այն, որ վճռաբեկ բողոքարկումը ևս Փաստաբանն իրականացնելու է: Այս առումով Հանձնաժողովը հաշվի առնելով, որ քննարկվող դատական ակտի վճռաբեկ բողոքարկման ժամկետը 5 աշխատանքային օր է կազմել, որը հիմնականում հավասար է լինում 7 օրացուցային օրվա՝ հարկ է համարում որպես լրացուցիչ հիմնավորում (օրինակ) վկայակոչել նաև Կանոնագրքի 3.8.3 կետը, որի համաձայն՝ նույնիսկ պայմանագրից հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է ապահովել այն դատական ակտի բողոքարկումը, որի բողոքարկման ժամկետը չի գերազանցում 7 օրը. ասվածը ևս վկայում է այն մասին, որ առկա իրավիճակում, հաշվի առնելով նաև վերաքննիչ բողոքարկման փուլում ցուցաբերած վարքագիծը, Փաստաբանն իրավասու չէր առանց Դիմողի համաձայնության՝ զերծ մնալ Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 02-ի՝ ի վնաս Դիմողի կայացված որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելուց, սակայն դրսևորել է հակառակ վարքագիծ՝ այդպիսով չցուցաբերելով բարեխիղճ իրավական օգնություն Դիմողին:

Ողջ վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ նախորդ 3 պարբերություններում նկարագրված մասերն ինչպես առանձին վերցված, այնպես էլ համակցությամբ պարունակում են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում՝ Փաստաբանի կողմից, ընդ որում՝ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ առկա չեն, որպիսի պարագայում Փաստաբանն այս մասերով ենթակա է կարգապահական պատասխանատվության:

<u>8. Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի՝ սույն

որոշմամբ նկարագրված խախտման համար պետք է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Հանձնաժողովի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելով և լուծելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել խախտում թույլ տված փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է կարգապահական վարույթի քննության յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ, եթե առկա է խախտում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Փաստաբանին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից ու համադրությունից, մասնավորապես՝ տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ թեև տվյալ իրավիճակում Փաստաբանը Դիմողին իրավական օգնություն ցույց տալիս թույլ է տվել սույն որոշմամբ նկարագրված խախտումները, այդուհանդերձ՝ Դիմողը դրանց արդյունքում չի զրկվել իր ենթադրյալ իրավունքների պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունից, այսինքն՝ խախտումն այդ իմաստով ծանր ու անդառնալի հետևանքներ չի առաջացրել: Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ ձեռք չեն բերվել, ինչպես նաև հատուկ կարևորում է Փաստաբանի անձը և նրա դրական բնութագիրը՝ հաշվի առնելով Փաստաբանի երկարամյա փորձն ու կարգապահական տույժի բացակայությունը:

Հետևաբար, Հանձնաժողովի գնահատմամբ՝ Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» տույժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով նաև Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Զոյա Վասիլի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 191) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-24178 կարգապահական վարույթը մասնակի՝ Կանոնագրքի 3.1.3

և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների առերևույթ խախտման հատկանիշների մասով, կարճել:

2. Փաստաբան Զոյա Վասիլի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 191) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի՝ սույն որոշմամբ նկարագրված խախտման համար:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24178-2-Ա
16 ապրիլի 2025թ.
ք.Երևան